ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Историко-филологический журнал

1999, 2—3 (151—152)

ԱՌԱՆՁՆԱՏԻՊ

ОТДЕЛЬНЫЙ ОТТИСК

ՍԱՆԱՀՆԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՅՈՒՆԱԿԱՄԱՐԱՇԱՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Ճարտարապետության դոկտոր ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

IX—X դդ. հայ ճարտարապետությունն իր հիմքում ուներ VII դարում ստեղծված նորաձևություններ, որոնցից էր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ՝ Զվարթնոց տաճարի առաջին աստիճանի արտաքին թաքկապատի ներքին հարթությունը ձևավորող դեկորատիվ սյունակամարաշարը (սյուներն ունեին 20 սմ տրամագիծ և 6—7 սմ բարձրություն)։ Նորաստեղծ այդ մոտիվը մինչև VII դարը անհայտ էր և կիրառվել էր առաջին անգամ։ Նույն մոտիվը նույն ձևով առկա է Իանակ տաճարում՝ իրականացված, ըստ երևույթին, Զվարթնոցի նմանողությամբ։

Զվարթնոցի կառուցումից 300 տարի անց տվյալ մոտիվը, որոշակի վերամշակմամբ, կիրառում է գտնում Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցում, նրա արտաքին ճակատների ձևավորման մեջ։ X դարի երկրորդ կեսի ընթացքում նույն մոտիվով ձևավորվեցին Անիի հանրահայտ տաճարների արտաքին ճակատները։ Այդպիսով հայ ճարտարապետությունը հայտնվում է զարգացման նոր փուլում, վերջնականապես ձևավորվում է հայ ճարտարապետության նոր ոճը որպես այդպիսին։ XI և հաջորդ դարերի ընթացքում Հայաստանում և հարևան Վրաստանում հայկական հիշյալ նորընծա ոճով կառուցվում են քրիստոնեական բազմաթիվ տաճարներ։

XII—XIII դդ. ընթացքում հայկական ճարտարապետության այդ ոճը խաչակիրների ջանքերով և նրանց հետ Եվրոպա գաղթած հայ վարպետների և ճարտարապետների անմիջական գործակցությամբ հայտնվում է Արևմտյան Եվրոպայում՝ հունական և հռոմեական ճարտարապետության տիրապետության ոլորտում և աննախընթաց զարգացում է ապրում՝ կրելով գոթական և ռոմանական անունները։ Այդ անվանումներով ոճերը բնորոշելու համար, բացի բարակ և բարձր սյուների, ուրիշ շատ կողմեր, ձևեր, տարրեր կան, բայց հիմնականը, որ սկզբից մինչև վերջ իր առկայությունը ունեցավ բոլոր նորակառույցներում, մեզ մոտ դեռևս X դարի կեսերին ծնունդ առած սյացիկ սյուներն են ու իրար կապող կամարները՝ իրենց յուրահատուկ կողմերով։ Իհարկե, արդարացի կլիներ, որ մեր թվարկության երկրորդ հազարամյակի նախորդ շրջանում հայ ճարտարապետության օրգանիզմում ստեղծված այդ ոճը անվանվեր հայ-գոթական, հայ-ռոմանական։ Մենք իրավասու ենք այդ հարցը բարձրացնելու նաև մեր օրերում[1]։

Նկատի ունենալով Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցում գործադրություն ստացած նորաձև սյունակամարաշարի մեծ նշանակությունը ոչ միայն ազգային մշակույթի շրջանակներում, այլև համընդհանուր ճարտարապետության անդաստանում, անհրաժեշտություն է առաջանում ամենայն ուշադրությամբ և բազմակողմանիորեն դիտարկել այդ հարցը ինչպես սկզբնական, այնպես էլ զարգացման տարբեր շրջաններում։

Հայ ճարտարապետության պատմության և տեսության քաջահմուտ հետազոտող, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի Ճարտարապետության ակադեմիայի ակադեմիկոս Հովհաննես Խալփախչյանը տե-

---

1 Տ. Հ. Մարության. Գոթական՞, թե՞ հայ-գոթական ճարտարապետական ոճ.—«Գարուն», 1997, № 7, էջ 54—56։

անցնում և սակայն դիտարկելի է, հյուսիսային ճակատի արևմտակողմի կեսը ծածկվում է միայն այդ գոյություն ունեցող Աստվածածին եկեղեցով, որ մի քանի մետրի վրա է ու երկու եկեղեցիների միջև հարմարեցված է ակադեմիայի կամարածածկ սրահը. արևմտյան ճակատը ակտիվ սյունակամարաշարով ծածկելը անպայման կվնասեր նույն գծի վրա գտնվող Աստվածածնի հետ առնչվող-ներդաշնակությանը, առավել ևս, որ վերջինս զգալի փոքր է Ամենափրկչի համեմատությամբ։

Ի՞նչ է արել կառուցողը. սյունակամարաշար է ստեղծել միայն արևելյան ճակատի և հյուսիսային ճակատի երևացող մասի վրա՝ մինչև Աստվածածնին ու ակադեմիային հասնելը, և մի երկու կամարաթռիչք էլ հարավային ճակատի արևելյան ծայրում՝ արևելյան ճակատից օրգանական անցում կատարելու համար։ Նենքն ամբողջությամբ արտաքուստ շարված է սրբատաշ բազալտով, որն ինքնին մեծ հարստություն է։

Արևելյան խորանի երկու կողմերում ավանդատներ կան, որոնց պատուհանները բացվում են արևելյան ճակատի վրա։ Այդ պատուհանները բնականոն՝ ավանդատան և նրա արևելակողմի կիսաբոլոր խորշի առանցքի նկատմամբ սիմետրիկ լինելու դեպքում կծածկվեին արևելյան կամարաշարի երկու նախավերջին զույգ կիսասյուներով։ Որպեսզի այդ չլինի, կառուցողը ավանդատների այդ պատուհանները պատի հաստության սահմաններում թեքել է հյուսիսայինը դեպի հարավ, հարավայինը դեպի հյուսիս։ Այս միջոցառումը հնարավոր է դարձրել, որ այդ պատուհանները արևելյան ճակատի վրա բացվեն երկրորդ և ութերորդ (նախավերջին) կամարաթռիչքներում, ամենայն կանոնավորությամբ։ Այս փոքրիկ նկատումը ցույց է տալիս, որ դեռևս հատակագիծը մշակելիս մտահոգված են եղել արևելյան ճակատի սյունակամարաշարի կանոնավորությունը չխախտելու հարցով։

Մեզ հայտնի չէ, թե Հ. Խ. Խալփախչյանը տեխնիկապես ինչ ձևով էր պատկերացնում գոյություն ունեցող ճակատի վրա, կառուցվելուց մոտ 20 տարի անց դեկորատիվ սյունակամարաշար ստեղծել-հարմարեցնելը։ Նա փաստարկում է, որ շինության արևմտյան կեսի ճակատների, ինչպես և արևելյան ճակատի կամարաշարից վերև պատի շարքը ավելի կանոնավոր է, քան կամարաշարի սյուների միջև առկա պատի շարքը, որ իբր տարբեր մեծությամբ քարեր օգտագործելու պատճառով վերջինիս շարքերը հորիզոնականի չ-բերված։ Նա երևի մտածել է, որ արևելյան ճակատի ստորին մասի երեսապատումը մոտ 15—25 սմ հաստությամբ և ճակատի ողջ լայնությամբ հեռացրել են (այսինքն՝ քանդել), տեղադրել սյունակամարաշարը, նոր ապա երեսապատում ստեղծել սյուների միջև։ Այս ձևը թերևս ընդունելի չպիտի համարել, քանի որ մոտ 10—15 մետր բարձրության, բազալտակերտ, շաղախով ամրացած պատի ստորին կեսը՝ մոտ 7,5 մետր բարձրությամբ, պատի հաստության 25—30 տոկոսը քանդել, կնշանակի ողջ պատը խարխլել, կայունությունը հարցականի տակ դնել, նաև այդ գործն իրականացնողների կյանքը վտանգի ենթարկել։ Հնարավոր է մտածել ճակատի մի կողմից հատված առ հատված քանդել-վերակառուցել, շարժվելով դեպի ճակատի մյուս կողմը, բայց կյանքում նման բան չի կիրառվում. հանուն կանոնավորության ճակատը կառուցում են ընդհանուր լարով։

Այս պայմաններում ավելի դյուրին կլիներ գոյություն ունեցող ճակատին կիպ կպած նոր պատ կանգնեցնել սյունակամարաշարով հանդերձ, բայց հատակագծում նման բան ենթադրելու նշաններ չկան. այդպես անելու դեպքում փորձառու հեղինակը նկատած և իր գծագրերում անդրադարձած կլիներ ու այդ մասին կգրեր։

Ճակատների մեծաչափ և բարձրորակ լուսանկարների ուշադիր դիտումը մեզ հնարավորություն է տալիս չհամաձայնել հեղինակի նկարագրության հետ։ Կամարաշարի միջսյունային պատերի շարվածքը որևէ չափով չի զիջում մյուս ճակատների շարվածքի կանոնավորությանը։ Ընդհակառակը, նկատվում

է կառուցող ճարտարապետի կողմից շարվածքը տեղին համապատասխան իրականացնելը։ Այստեղ ևս շարքերի կարերը հորիզոնական են, ուղղաձիգ կարերը նույնպես կանոնավոր։ Շարքերի տարբեր բարձրությունները պատահական կամ ստիպողական չեն։ Նրբաճաշակ ճարտարապետը շարքերը ստեղծել է կապելով կամարաշարի խոյակների, խարիսխների, պատուհանների զարդարուն վերնակամարի թեերի հետ և այլն։ Սյունակամարաշարի տարբերը գոյություն ունեցող պատի արտաքին հարթության վրա հարմարեցնելուամրացնելու գործողությունների հետքեր չկան, երևապատման քարերի մնասվածքներ և կարկատաններ չկան, երևույթներ, որ միշտ ուղեկցում են նման վերակառուցումներին։ Հաղիվ նկատվող փոքր մակերեսներ կան, որ ինչ-որ չափով անկանոն են, պարզ հասկացվում է, որ այդպիսիք ընթացիկ նորոգման արգասիք են։

Այն, որ կիսասյուները զգալի չափով են առաջանում պատի հարթությունից, բնական է, մանավանդ քարի ոչ պայծառ գույն ունենալը, լույս ու ստվերը դրա անհրաժեշտությունն ունեցել են։ Այն, որ սյուների խարիսխները ոչ թե նստել են որմնախարիսխի երրորդ, այլ երկրորդ աստիճանին, սակայն պատահում է մեր նաև այլ լավագույն հուշարձաններում. այդ երբեմն արվում է որմնախարիսխի հիմքը շատ չլայնացնելու համար։ Այսպիսի դեպքերում սյունաշարը մոտ 0,5 մ բարձրություն է շահում, մի բան, որ նույնպես շատ կարևոր է։

Մենագրությանը հեղինակը Ամենափրկիչ եկեղեցու ողջ շինքի և նրա առանձնահատկությունների ճակատի սյունակամարաշարի ոչ միաժամանակյա կառուցումը համաստեղելու համար նշում է նաև, որ կտիտորների բանակում առկա տաճարի մանրակերտի վրա սյունակամարաշարը դուրս չի տրված։ Պետք է նկատեմ, սակայն, որ հիշյալ իմաստանոցակում կարևորը թառամերին յամ ներկայացնելն էր, որը և արել է քանդակագործը, իսկ եկեղեցու մանրակերտը սիմվոլիկ է. ինչպես բոլոր մանրակերտները (մի քանիսի բացառությամբ), այնպես որ այս պահանջը տվյալ դեպքում, թերևս, նկատի չառնվի, մանավանդ որ այս մանրակերտը Ամենափրկիչ եկեղեցու հետ պատկերի առումով ընդհանուր ոչինչ չունի, ուր մնաց մանրամասների պահանջ ներկայացնելը, և այս, հնարավոր է ենթադրել, որ այդտեղ պատկերված է արևմտակողմի ճակատը, որտեղ ուղղանկյուն փորվածքը ենթադրում է գլխավոր մուտքը։ Քանդակողը մանրակերտը ստեղծել է ոչ գրավիչ, որպեսզի կտիտորների գրավչությունը առավել ցայտուն լինի։

Եթե հետազոտողը մանրակերտի գմբեթաթմբուկի վրա սյունակամարաշարի ոչ մի նշան չտեսնելով, վերակազմության գծագրում ցույց է տվել զույգ կիսասյուներով կամարաշար, ապա նույնպիսի մոտեցում կարելի էր ակնկալել արևելյան ճակատի սյունակամարաշարի համար։

Գիտնականը եկեղեցու կառուցման ավարտը, ինչպես ասացինք, համարում է 966 թ., հետևաբար նրա կառուցումը կարող էր սկսված լինել տասը տարի առաջ՝ 956 թ.։ Այս նշանակում է, որ Ամենափրկչի ճարտարապետը արդեն 955—956 թթ. ստեղծած է եղել այդ մոտիվը և իրականացրել է բուն եկեղեցու կառուցման հետ միաժամանակ, այլ ոչ 980-ական թթ.։ Կարծում ենք, որ որևէ առիթ չունենք այդ մոտիվի իրականացման ժամանակը մոտ 20 տարով ուշ ներկայացնելու։

Հետաքրքիր է Հ. Խալփախչյանի ներքոհիշյալ նկարագրությունը, որով կարելի է եզրակացնել ճիշտ հակառակը, որ իրոք սյունակամարաշարը կառուցվել է բուն շինության կառուցման հետ միաժամանակ և ոչ հետո։ Ահա այն. «Կիսասյուների որմնախարիսխները և խոյակները զգալի չափով ուժեղացնում են կամարաշարի գեղարվեստական արտահայտչականությունը։ Իրենց ձևերով և քանդակներով դրանք համաձայնեցված են պատուհանների և դրների շրջանակների հետ, ինչով ձեռք է բերվում միասնություն շինության ար-

տաքին դեկորատիվ զարդարանքում։ Այդ հիմք է տալիս ենթադրելու, որ կամարաշարն իրականացվել է իր իսկ՝ եկեղեցու կառուցողի կողմից»[3]։

Հ. Խալփախչյանը գրում է. «Արևմտաեվրոպական գիտնականների կարծիքով Ամենափրկիչ եկեղեցու կամարաշարը ունի ճարտարապետական-գեղարվեստական մեծ, Հայաստանի սահմաններից շատ հեռու դուրս եկող նշանակություն։ Մասնավորապես Գ. Ռիվոյրան[4] նշում է, որ այն (կամարաշարը—Տ. Մ.) հանդիսանում է Ռավեննայի ճարտարապետության նախօրինակներից մեկը»[5]։

X դարի կեսերին Հայաստանում ստեղծված սյունակամարաշարի վերոհիշյալ նշանակությունը պարտավորեցնում է ճշտել նրա նաև ստեղծման ժամանակահատվածը, որը և կատարեցինք այստեղ։

---

[3] Նույն տեղում, էջ 31,

[4] G. P. Rivoira. Architettura musulmana, sue originie suo cviluppo. Milano, 1914, p. 225 (տե՛ս Օ. Հ. Խալփախչյան. Указ. соч., с. 32).

[5] Օ. Հ. Խալփախչյան. Указ. соч., с. 32.